

Հայր Թադէոս վրդ. վերադարձաւ Ս. Էջմիածին և նշանակուեցաւ Լազարապատի հիւրընկալ:

— Զիշնէի կալուածոց նախորդ կառավարիչ և Կոնսիստորիայի նախնադամ Տ. Նփրեմ վրդ. Սուքիասեան՝ նորընտիր առաջնորդի ժամանելուց յետոյ վերադարձաւ Ս. Էջմիածին:

— Միքայէլ վրդ. Տ. Մինասեան, վերադառնալով Սեւանից, նշանակուեցաւ վանահայր Անույ և մեկնեց իւր նոր պաշտօնատեղին:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԵՍՉԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ

ՋՈՒՍՈՒՄԵԱԿԱՆ ԵՒ ՋՏԵՍԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԷ ՃԵՄԱՐԱՆԻ
ՅԸՆԹԱՑՍ 18 98/99 ՈՒՍՈՒՄԵԱԿԱՆ ԵՐՋԱՆԻ*

— — —

Առ 1 սեպտեմբերի 1898 ամի ի Ծեմարանիս էին աշակերտք 171. յընթացս ուսումնական տարւոյ ի նորոյ ընկալեալ եղեն աշակերտք 62. ըստ այսմ գումար համօրէն աշակերտաց լինի 233. յորոյ 23 երթեկեկք և 210 գիշերօթիկք:

Ենթահանուր թուոյ 233 աշակերտաց ի մասնագիտական բաժնի Ծեմարանիս ուսանին աշակերտք 36. ի դպրոցական բաժնին 127. իսկ ի վարժոցին 70. Ի մասնագիտական բաժնին են լսարանք երեք: Եռաշնուժ լսարանի են ուսանողք վեշտասան, յորոց մեծասան անձինք փոխադրեցան յերկրորդ լսարան, երկրքեան մնացին ի սմին լսարանի և երեքին ունին քննիլ յուսմանց ինչ յամենանն սեպտեմբերի**, Երկրորդում լսարանի են ուսանողք ութն:

* Փոխանակ մի քանի համառօտ ձեղնկոտիւններ տալու անցեալ ուսումն. շրջանի մասին մեր ներկայացրած քանակական տեղեկագրի մէջ, ինչպէս արեւ իմիջ օգիմ՝ աւելի բարեւ համառեցիմք օպագրել այսեղ տարուայ վերջում, յունիս 2-ին, պ. Կոստանեանի նորին Վեհափառութեան մատուցած տեղեկագրի համառօտութիւնը:

** Դասարանում մնացածներ անոս են, որոնք հիւանդութեան պատճառով հայրենիք կիմ զմացել եւ այնչափ վերադարձան:

որք ամենեքեան փոխադրեցան յերրորդ լսարան: Եռանոցաց երրորդի լսարանի աւարտեցին զլիակատար ընթացս ուսմանց Ծեմարանի ողիք 11:

Մին յուսանողաց Գ. լսարանի դպիր Սարգիս Սուցեան քննիլ է յամենանն սեպտեմբերի ի գրականութենէ Թուսաց:

Ի դպրոցական բաժնին են դասարանք հինգ, յորս զետեղեալ են աշակերտք 127. յաւարտ տարեկան ընթացից ուսման ըստ որոշման Մանկավարժական խորհրդոյ փոխեցին զդասարանս իւրեանց առանց հարցաքննութեան աշակերտք 55, քննիլք են յամենանն սեպտեմբերի աշակերտք 62, մնան ի նախկին դասարանս իւրեանց աշակերտք 7, արձակեալ են ի Ծեմարանէ աշակերտք 3:

Ի վարժոցի Ծեմարանիս յերկուս բաժանմունս նորին զետեղեալ են աշակերտք 70, յորոց 50 գիշերօթիկք և 20 երթեկեկք. ի համօրէն թուոյ 70 աշակերտաց վարժոցի փոխեցին զդասարանսն աշակերտք 31, քննիլք են աշակերտք 30, մնան ի նախկին դասարանսն աշակերտք 7 և արձակեալ են ի Ծեմարանէ աշակերտք 2, ի պատճառս կարի անպատրաստ լինելոյ իւրեանց յուսումն ընդ ընկերաց:

Թիւ աշակերտաց Ծեմարանիս ըստ վիճակաց եկեղեցական վարչութեան Հայոց պատկերանայ այսպէս՝

- 1) Թեմ Երեւանայ 104.
- 2) Թեմք Տնձկատանի 56.
- 3) Թեմ Վրաստ. և Իմերէթի 35.
- 4) Թեմ Արցախու 15.
- 5) Թեմք Պարսկաստանի 10.
- 6) Թեմ Եմամալուոյ 6.
- 7) Թեմ Բեսարաբ. և Ն. Նախ. 5.
- 8) Թեմ Աստրախանի 1.

Գումար 233.

Ի պատճառս հրաժարելոյ ի պաշտամանէ ի վախճան անցելոյ ուսումնական ամին ոմանց ուսուցչաց և վերակացուաց Ծեմարանիս՝ առ ներկայ ուսումնական ամն հրաժարեցան ի պաշտօն ուսուցչութեան Ենթահանակ Լազար սարկաւար, ի նախկին սանունց Ծեմարանիս և պ. պ. Բազրտա Սալաթեանց, ի կայսերական համալսարանէն Մոսկուայի և Մանուկ Ա-

բեղեանս ի նախկին սանուհեց Ծեմարանիս որ կատարելագործեալ էր զուսումն իւր ի համարարանս Գերմանիոյ. ի պաշտօն վերակացութեան հրաւիրեցաւ շնորհ. Արշակ սարկաւազ Մինասեանս որ այն ինչ ի հրապարակել զորով յանուանարկել զՎարչութիւն Ծեմարանիս և ի խեղաթիւրել զիրին ձգարտութիւնս արձակեցաւ ի 15 մարտի տարւոյս ի պաշտամանէ իւրմէ:

Զպաշտօն ուսուցչութեան ի վարժոցին վարէին շնորհ. Եսայի սարկաւազ և պ. պ. Մարտիրոս Հախնազարեան և Գեորգ Ղազարեանս որոց մերթ ընդ մերթ աջակցէին և ուսանողք լսարանաց Ծեմարանիս:

Զպաշտօն օգնականի տեսչի յանձին ունէր Բարեշնորհ Տ. Կարապետ վարդապետ զվերակացուաց՝ ունէին զպաշտօն շնորհ. Արշակ սարկաւազ և պ. Մարտիրոս Հախնազարեանս որոց աջակցէր և ուսուցիչ վարժոցի պ. Գ. Ղազարեանս. յետ արձակման Արշակ սարկ. ի վերակացութիւնն մնայր ի ձեռս պ. պ. Հախնազարեանի և Ղազարեանի. զպաշտօն անտեսի Ծեմարանի վարէր շնորհ. Եսայի սարկաւազ, իսկ զմատենադարանապետին պ. Աւետիք Տէր Դասպարեանս. հսկողութիւն ի վերայ հիւանդաց և հիւանդանոցի ըստ առաջնումն մնայր ի ձեռս բժշկի Ծեմարանիս պ. Կարապետի Տէր Խաչատրեանս:

Սկիզբն դասախօսութեանց եղև յ9 սեպտեմբերի 1898 ամի. աւարտ նոցին ի 24 մայիսի տարւոյս Գումար զասուց աւանդեալոց ի դպրոցական և ի մասնագիտական դասարանսն յընթացս յիշեալ ժամանակի լինի 5160:

Ե8 ապրիլի տարւոյս սկիզբն եղև տարեկան Հարցաքննութեանց Զ. դասարանի և երկից լսարանաց, իսկ աւարտ նոցին եղև յ31 մայիսի տարւոյս ի 24-էն սեպտեմբերի 1898 ամի յ1 յունիսի տարւոյս եղեալ են գումարմունք մանկավարժական խորհրդոց 17, յորս քննեալ են խնդիրք, որք հային յուղղութիւն վարուց և ի յառաջագիւծութեան աշակերտաց, ի բարգաւաճումն այլ և այլ հանգամանաց դաստիարակութեան ևս և ի գիւտ հնարից բարեօքելոյ զիշխանակ դասաւանդութեան և զիւրբնոյն առնելոյ զուսումն գիտութեանց և զդաստիարակութեան:

Գումար ծախուց ձեմարանի ըստ ամենայն մասանց նորին * ի 1-էն սեպտեմբեր ամսոյ 1898 ամի յ1-ն յունիսի տարւոյս լինի 31425 ռ. 33 կ.

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱՅՄԱՆ ԻԵ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ՕՐԸ ՏԵՍԶԻ ՆԵՐԿԱՅԱՐԵՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՅԻՐ.

Չերդ Սրբութիւն,
Սրբազան Հայր ևւ եղբարք,
Պատուական Հանդիսականներ.

Բասն և հինգերորդ անգամն է, որ այսպէս հրապարակաւ հաշիւ է արուում հայ ժողովրդեան, թէ ինչ է անցնում ու պատում այս շինուածքի մէջ: Մինչև այժմ նորա գոյութիւնը տարիներով էր հաշուում ուստի և իւրաքանչիւր անգամ խօսք էր լինում միայն նորա մի տարուայ կեանքի և յառաջագիւծութեան մասին. այսօր մենք հասել ենք մի ժամանակակէտի, երբ ներկայում է նա մեզ իւր որոշ պատմական անցիւղով և այդ 25 տարիների անցիւղը՝ այսպիսի կրթական հաստատութեան համար, կեանքի պատկանելի մի շրջան է, որ առատ ու բազմակողմանի բովանդակութիւն ունի ի՞նչ էր սա 25 տարի առաջ և ի՞նչ է այժմ. անշուշտ քաբերի անբարբառ մի կերտուած այն ժամանակ, որին կենդանութիւն և իմաստ ներշնչողը մի Մեծագործ Հայրապետի հաւատըն ու յոյսերն էին, նորա շուրջը աշխարհի զանազան կողմերից ժողովուած մի խումբ մանուկների կրթութեան տեսչը, հայ ժողովրդի մի փոքրիկ բանիմաց մասի վառ իղձերը. այսօր այդ յոյսերն ու իղձերը իրականութիւն են դարձել և այս շինուածը կենդանի ու խօսուն մի մարմին է, որին միայն մի թարգման է պէտք շատ բաներ պատմելու համար շրջապատող հասարակութեան և ահա այդպիսի մի թարգմանի դեր կատարելու պարտաւորութեամբ կանգնած եմ Ձեր առաջ: Լինելով մէկն այն հարիւրաւոր մանուկներից, որոնք մեր աշխար-

* Բացի կերակրեղենի ծախքը, որ վաճառ է եղում.

Հի մի մեծ անկիւնում անտաշ ու անցայտ ընկած էին մինչև որ սորա վերայ սաւառնող հողին գտաւ և լոյս աշխարհ հանեց և առաջինը նոցանից որ արտաքոյ կարգի շնորհի է արժանացել սորա անտեսութեան գործը վարելու՝ անսահման երախտագիտութեան զգացմունքով և սեփական անարժանութեան գիտակցութեամբ լի պէտք է աշխատեմ այժմ իրը սան մտարիքի թէ ինչ են ստացել այս հաստատութիւնից նորա սաները իրեն պաշտօնեայ և վարիչ հաշիւ տալ թէ ինչ են գործել այստեղ նորա պաշտօնեաներն ու վարիչները:

Բանն և Հինգ տարի տառջ զնալ հրաւիրեցի բայց հարկաւոր էր նախ այն յիշել ինչ որ կատարուեցաւ երեսուն տարի առաջ: Եթէնք այն իմաստուն Հայրապետին որ անապատի ու ամացութեան մէջ կանգնած՝ ձեռքին մի քար շուրջը այսպէս հանդիսատես բազմութիւն—դէպի երկինք ուղղեց աչքերն ու մրմնջաց. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արու մեզ Ծէր» — և դրու քարը և այդ ջերմեանդ պիտի բերել և եղաւ ծիրով. զարմանալի կերպով անսպասելի արագութեամբ բարձրացան այս տաճարի կամարները և մի քանի տարի անցած պատարարան էին արդէն կրթող սերունդի: Ինչ մեծ եռանդ տնտեսագիտական բազմակողմանի հմտութիւն էր պէտք այսպիսի մեծ գործ զլուս բերելու համար՝ մի քանի խօսքով նկարագրել անհնարին է. դորա համար պէտք էր կոնգակների և մասնաւոր զբոս թիւնների մի ահագին ժողովածու մէջտեղ բերել որոնցով քաջարթուն Հովուապետը գործը սկսելուց առաջ և յետոյ աշխարհի ամէն կողմերն է պիտել ուր հայ մարդու շունչ կայ կամ եղել է մի օր՝ մոռացուած գրեթէ կորած կապաւանդութիւններ հանել է անյայտութեան միջից մեծամեծ ջանքերով արդիւնք և զանազ գարձրել Մայր Աթոռի համար մեծատունների յորդոր կարգացել գործող անձանց խրախուսել և փոքր միջոցով խոշոր դամարների ժողովել պէտք էր բերել այն բազմազան հաշիւները որ ներկայացրել են արի գործակատարներ հեռուից ու մտախից՝ շինական և քարաքարից հայ հասարակ ժողովրդի բաշխած լուսանների համար:

այն խորհրդածութիւնները որ ունեցել է գրով բազմահոգ Հայրապետը իւր հօտի մէջ գիտութեամբ ու կարողութեամբ աչքի ընկնող անձանց հետ: Ամէնքը գիտեն որ Գեորգ Դ Մայր Աթոռի գանձարանը թափուր գտաւ բարեօքել վանքի տնտեսական գրութիւնն այնչափ որ ոչ միայն նորա սովորական պէտքերը կանոնաւորութեամբ հոգացուին այլ կարելի լինի նաև բազմածախք շինութիւններ անել և մի նոր հաստատութիւն պահել որ շուտով աւելի շատ ծախք պէտք է պահանջէր քան մինչև այժմ բոլոր եղածները միասին՝ ահագին գործ էր այդ և ընդ միշտ յիշատակաց արժանի:

Բայց մի բարձրագոյն կրթարան ունենալու համար բաւական չէր միայն նիւթականի մասին հոգալ այնպիսի ժամանակ երբ պատրաստ աշակերտներ ժողովին անգամ առանձին ջանք էր պահանջում չիմնադիրը որոշել էր Ճեմարանում 75 աշակերտ պահել՝ 49 Ռուսաստանի 21 Տաճկաստանի և 5 Պարսկաստանի վիճակներից բոլորը զիշեթթիկ և ձրիաթոշակ՝ բաժանուած թեմերի վերայ այնպէս որ հնարաւոր լինէր բոլոր հայարեակ տեղերից սաներ ունենալ: Արտասահմանից աշակերտներ պահանջուեցան յատուկ կոնգակներով իսկ Ռուսաստանի համար նշանակուեցան երեք վարդապետներ՝ Արխատակէս Սեդրակեան (այժմ արքեպիսկոպոս) Գեորգ Սուրենեանց (այժմ արքեպիսկոպոս) և Վահան Բաստամեան (հանգուցեալ) որոնք թեմերը շրջելով պէտք է աշակերտներ բնորէին և դորա հետ մէկտեղ Ճեմարանի բացման ժամանակը յայտնէին ու յորդորէին կարող անձանց կամ հասարակութիւնների ջանայել իրենց օգնութիւնը այդ նորարոգորջ հաստատութեան համար: 1874 թ. 23 սեպտեմբերի միջոցակից երեւում է որ Ճեմարանի բացման միջոցին ժողովուած աշակերտներն ընդամենը 59 հոգի էին նոցա թիւը շատ շուտով աւելացաւ և անցաւ նախագծած սահմանից — Ծատ աւելի ծանր խնդիր էր հարկաւ Ճեմարանի համար արժանաւոր վարիչ և դասատուներ գտնելը: Հեռաւան չիմնադիրը տարիներ առաջ որոնում էր այդպիսիներին. ի միջի այլոց նա գիմել էր օրինակ 1873 թ. սեպտ.

26 զրուեցեալք Եղեհիայ Սարգիս Տիրապետան ուսումնական անձինս և տեսուչ Տրապիշի րայց սա զանազան պատճառներէր բերելով իւր պատասխանի մէջ, չի ընդունում մինչև իսկ երկու ամսով խորհրդածութեան զալու առջարկը։ Կային նաև այնպիսիները որոնք իրենք պատրաստակամութիւն էին ցոյց տալիս պաշտօն ստանձնելու ծեմարանում րայց երեկ խոհեմ շրջահայեցութիւնը թոյլ չէր տալիս օգտուել նոցա հմութիւնից, այսպէս օր, յայտնի Արք. Ամիրխանեան 19 օգոստ. 1874 մի խնդրագրով առաջարկել էր իւր Ծառայութիւնը և անպատասխան մնացել։ Դուրսը ցանկացած մարդիկը չգտնելով՝ Հիմնադիրը ստիպուած էր Միաբանութեան ընծայած ուժերով բաւականանալ և երբ 1874 սեպտ. 28-ին ծեմարանը բացուեցաւ՝ ուսուցիչներն էին 4 հոգեւորականներ։ Սուբիաս վարդապետ Պարզեան (այժմ արքեպիսկոպոս), որ և միանգամայն փոխ տեսուչ էր, Եովհաննէս վ. Երամեան (հանգուցեալ), Արիստակէս վ. Սեդրակեան և Դէորդ վ. Սուրենեանց, և միայն մի աշխարհական՝ Պողոս Ծեպէճեան, երգեցողութեան ուսուցիչ, յետոյ տնտես և վերակացու։

Ծեմարանի հիմնական ծրագիրը, որ 1874 մայիս 11-ին Կովկասի Փոխարքայի միջոցաւ առաջարկուեցաւ ի Բարձրագոյն հաստատութիւն՝ իւր առաջին կանոնով նպատակ է դրնում «պատրաստել զկուսակիւծ եկեղեցական, բարեկիրթ և քաջահմուտ եկեղեցական և Աստուածարանական ուսմանց և արտաքին կարեւոր և կենցաղօգուտ զիտութեանց և լեզուաց ի պէտս Հայաստանեայց եկեղեցոյ», և ԺԲ. կանոնով որոշում է. «Ուսումնարան աշակերտք Ծեմարանի պարտին ընդունել յատկապէս դաստիճան վարդապետութեան և առհասարակ եկեղեցականութեան և իրեւ բացառութիւն (կարգին) յուսուցչութիւն յազգային ուսումնարանս։ Փոխարքային ուղղած զրութեան մէջ Հիմնադիրն ասում է, որ արդէն իւր Պետերբուրգում եղած միջոցին ստացել էր Թագաւոր Կայսեր հաճութիւնը Ծեմարան բանալու համար։ Երբեք մի քանի ամիս յետոյ ստացուեցաւ Ներքին Դործոց Նախարարի զրութիւնը (4 նոյ. 1874), որ

բացուած ծեմարանի գոյութիւնը կրկին Բարձրագոյն հաճութեամբ վաւերացնում էր և յայտնում թէ՛ ի նկատի առնելով յատկապէս Լուսաւորութեան Նախարարի և Սրբ. Սինոդի Օրեր— պրոկուրորի մի քանի նկատողութիւնները, կարեւոր էր համարել ի Բարձրագոյն հաստատութիւն առաջարկել Հայրապետի Ծրագրից ինչ ինչ փոփոխութիւններով կազմած մի ժամանակաւոր կանոնադրութիւն, որով 9 տարի պէտք է կառավարուէր Ծեմարանը և ապա ձեռք բերուած փորձառութեանց հիման վերայ նոր Ծրագիր առաջարկուէր, Հիմնական Ծրագրի մէջ մտցրած այդ փոփոխութիւններից առանձին ուշադրութեան արժանի է մանաւանդ մի կէտը, Հիմնադիրը գուցէ շրջապատող պայմաններն ու միջոցների աղութիւնն ի նկատի ունենալով՝ 6 տարուայ սահմանափակ դասընթաց էր որոշել իւր Ծեմարանի համար։ Նախարարը նկատում է, որ այդ չափը անհամապատասխան էր գտել Ծեմարանի անուան ու դիրքին և աշխատել էր նորա Ծրագիրը յարմարեցնել Ռուսաց հոգեւոր ճեմարանների Ծրագրին՝ իննամսայ շրջան որոշելով և բաժանելով 6 տարուայ դպրանոցական և 3 տարուայ բուն ճեմարանական կամ մասնագիտական դասընթացի։ Այսպիսով Բարեխնամ Կառավարութեան միջամտութեանն ենք պարտական, որ մեր Ծեմարանը իսկական բարձրագոյն կրթարան լինելու շաւղի վերայ դրուեցաւ և Հիմնադիրը քաջալիրուեցաւ կրկնապատկելու և եռապատկելու իւր ջանքերը, որպէս զի հասցնէ այն իւր նպատակին։

Թող ներուի մեզ այստեղ մի քանի խօսք աւելացնել զազափար տալու համար թէ ինչ է բարձրագոյն հոգեւոր կրթարանը այսպիսի տեղում։ Թէ ուսումն առհասարակ հարկաւոր ինչ է՝ մեր ժողովրդին այդ բացատրելու հարկ չիւյ այլ ևս, ամէնքը նորա արժէքը հասկացել են, բայց թէ որչափ տարբերութիւններ կան զանազան ուսումնարանների մէջ, ուսման չափի և տեսակի կողմից՝ այդ մասին հայեացքները շատ շփոթ են և նոյն իսկ կրթուած դասը այնպիսի թիւր կարծիքներ ունի, որ ճշտել կկամենայինք— Բոլոր տարբերութիւնները մի առ մի թուելու միտք չունինք

Հարկաւ խօսքը հոգեւոր և աշխարհական տարրական, միջնակարգ և բարձրագոյն ուսումնարանների մէջ եղած տարբերութեան մասին է։ Եթէ բոլոր աշխարհական դպրոցների համար ընդհանուր նպատակ դնենք պարտաճանաչ և գործունեայ քաղաքացիներ պատրաստելը՝ հոգեւոր դպրոցների համար պէտք է ասենք՝ ճշմարիտ քրիստոնեաներ կրթելն է նպատակ։ Բայց քրիստոնեայ պետութեան մէջ ինչպէս քաղաքացին ազատ է քրիստոնեական պարտականութիւններից, այնպէս և քրիստոնեայն քաղաքացիական պարտականութիւններից։ Ուրեմն ոչ հոգեւոր դպրոցը կարող է բոլորովին անտես անել այն առարկաները, որոնք կարեւոր են լուս քաղաքացիներ կրթելու համար, և ոչ աշխարհական դպրոցը այն առարկաները, որոնք լուս քրիստոնեաներ կրթելու համար են կարեւոր։ Էականն այն է, թէ որ կողմն է գերակշռող և ուղղութիւն տուող։ Միտե՛ղ գործը գտնուում է եկեղեցական վարչութեան ձեռքում, որ եկեղեցւոյ գաղափարովն է առաջնորդուում և պէտք է այդ գաղափարին ծառայեցնէ՝ դասաւանդութեան բոլոր միջոցները, միւս տեղ պետական կամ հասարակական վարչութեան ձեռքում, որի համար առաջնորդողն արդէն պետութեան գաղափարն է և հասարակական բարիքը։— Իսկ ուսման ծաւալով թէ հոգեւոր և թէ աշխարհական դպրոցները երեք հիմնական կարգերի են բաժանուում՝ տարրական, միջնակարգ և բարձրագոյն։ Ծարրական դպրոցը տալիս է լոկ գիտելիքների, որոնք անհրաժեշտ են քաղաքակրթութեամբ աշխարհում ապրող ամէն մի մարդու համար, ինչպէս են՝ կարդալու, գրելու, հաշուելու արուեստը, կրօնի և բարոյականութեան սկզբունքների, ծանօթութիւններ շրջապատող բնութեան և աշխարհի մասին ելն։ Միջնակարգ դպրոցը պատրաստում կամ նախապատրաստում է մի որոշ ասպարիզի համար, զարգացնելով աշակերտի միտքն այնչափ, որ նա այլևայլ գիտութիւնների միջոցաւ ձեռք բերում և կրակացու թիւններն ըմբռնէ և կիսնքի մէջ գործադրելու եղանակը սովորէ։ Բարձրագոյն կամ մասնագիտական դպրոցը դրադեցնում է արդէն բուն իսկ գիտութիւններով, ոչ թէ ու-

րիշների կատարած հետազոտութեանց արդիւնքն է ուսանողի առաջը դնում, այլ այդ հետազոտութեան ծանապարհն է ցոյց տալիս և ուսուցանում վերատուգել ուրիշների արածը, ապա ինքնուրոյն կերպով գործադրել կամ շարունակել նոցա հետազոտութիւնը։ Արդ, մեր Ծեմարանն իրրեւ բարձրագոյն հոգեւոր կրթարան ունի իւր առանձին դերը, որ ոչ մի աշխարհական, ոչ մի հոգեւոր տարրական կամ միջնակարգ դպրոց կատարել չի կարող, և մի քաղաքակրթութեւոյ ժողովուրդ, որ ազգային եկեղեցի է կազմում՝ անհրաժեշտաբար պէտք է ունենայ գոնէ մի հաստ այդպիսի կրթարան։ Այդ կրթարանը պէտք է մարդիկ պատրաստէ, որոնք մեր հայրերի ժառանգութիւն թողած հոգեւոր գանձը ուսումնասիրութեան առարկայ դարձնելով՝ ներկայ ժողովրդի հոգեւոր կեանքի համար առաջնորդող սկզբունքներ գտնեն։ Ծեմարանը բարձրագոյն հոգեւոր կրթարան անուանել նշանակում է ուրեմն, նպատակ դնել նորա առաջ՝ այդպիսի ժամանակակից գիտութեան և քաղաքակրթութեան պահանջների համեմատ կրթութեամբ, ընդարձակ քրիստոնեական աշխարհայեցողութեան տէր հոգեւորականների պատրաստելու։ Ապա և նորա այս քսան և հինգ տարուայ մէջ ունեցած յառաջադիմութիւնը որոշելու և ցոյց տուած արդիւնքը գնահատելու չափը պէտք է այդ նպատակից առնենք, իւրաքանչիւր քայլափոխում գիտելով, թէ որքան մօտենում է գորան և հեռանում։

Շատ հարկ է մի անգամից կազմ և պատրաստ հանդէս չեկաւ, որչափ պատահարների է դիմացել նա մինչև այս վիճակին հասնելը և որչափ հեռու է դեռ բուն նպատակից։— Ծեմարանի դիւանատան մէջ ոչ մի պաշտօնական տեղեկութիւն չենք գտնում նորա առաջին ուսումնական տարուան վերաբերեալ, և այդ բացատրուում է այն մեծ ազդեցիկ հետեանքներով, որին զոհ գնաց նա հանդիսաւոր բացումից հազիւ երեք շաբաթ անցած, Հոկտեմբեր 24-ին հրդեհը լափեց ձեմարանական շէնքի մեծադոյն մասը և հազիւ նոր իրենց դասարաններում տեղաւորուած աշակերտներին իրենց բաց երկնքի տակ։ Եթէ նոքա այդպէս էլ չմնացին ու իրենց տեղերը չցրուեցան, և

սկսած մեծ գործն իւր որրանում չխեղդուեցաւ՝ պարտական ենք միմիայն Հոգեւոյս Հիմնադրի ամէն հիացմունքի արժանի հաստատականութեանն ու հոգեւոյ արիւթութեանն վհատեցուցիչ հանգամանքը ներկայ դեպքում այն չէր միայն որ մեծ աշխատութեամբ զուլս բերած շէնքը մի հարուածով ոչնչանում էր և հարկաւոր էր կրկին կոպէկ կոպէկ նպաստներ ժողովել մնասը ծածկելու համար այլ որ մինչ Հայրապետը սգում էր պատահած շրթադողութեան վերայ կային նորա հօտի նոյն իսկ նորա եկեղեցւոյ պաշտօնականներէ մէջ ուրախացողներն և այն ոչ թէ ագէաներից այլ սակաւաթիւ կրթութեաներից որոնցից առաւելապէս զօրեղ աջակցութիւն պէտք է սպասէր նա՝ խաւար ժամանակօ մ'այսպիսի մի կարեւոր կրթական գործի ձեռնարկելով— Զարմանալի տնրադգ հաստատութիւն է այս Ծեմարանը՝ ծնունդ է ծանր երկունքի մէջ մեծացել բամբասուած ու հալածուած ամէն կողմից հազար ու մի զրկանքներով դառն ապրիւթութեան դիմացել զրեթէ միշտ գծնէ դէմքեր է տեսել որոնք մօտից անցնելիս պարտք են համարել մի բշտել ու եթէ կարելի է մի քար պոկել աեղից ծագր ու անարգանք է լսել անգաղար՝ քաղցր ու յուսատու խօսք կամ զովասանք շատ քիչ անգամ բայց տարել է բոլորը կայ ու յառաջ է դիմում և յուսով ենք շատ ու շատ երկար՝ ընդ միշտ պէտք է մնայ ու յառաջագիմէ նորա հիմքը հաստատուն վիժի վերայ է գրուած և մի աներեւոյթ աջ հովանի է նորան Այդ աջը զօրաւիգ կցաւ նաև Հիմնադրին Նորա կեանքի առաջին աղետալից օրերում և կարճ միջոցում ելաւ նա կրակի միջից՝ ամբացած և գուցէ աւելի բարեկազմ ու հոյակապ քան առաջին անգամ Անկիհեր Հովուապետը՝ սեւ շարահամութեան հետ մէկ տեղ անկեղծ ցաւակցութիւն և օգնութիւն ևս գտաւ շատերի կողմից և այրուած շէնքը մեծ եռանդով վերանորոգեց հայրաբար հոգ տարաւ անպատասպար մնացած մանուկների համար Սոքա առժամանակ տեղաւորուեցան Ղազարապատ հիւրատան սենեակներում (մի փոքր մասը հին ժողովարանից ուսումնարանում) և բաժանուած էին երեք կարգի՝ Նախակր-

թարան Ա. և Բ. դասարան Բնականաբար այսպիսի նեղ վիճակի մէջ կարելի չէր կանոնաւոր դպրոց կազմակերպել և բոլոր պէտքերն ըստ արժանւոյն հոգալ հօկա 21 թուով Փոխ Տեսչի մատուցած մի ղեկուցադրից իմանում ենք որ այդ դպրոցում մինչև իսկ թէյի նախաճաշի ճաշի համար որոշ կարգադրութիւններ չէին եղել պակասում էր բժիշկի վերակացու դասի հրաւիրելու զանգ չկար Սակայն պէտք է ենթադրել որ այդ բոլորը շատ շուտով կարգի բերուեցաւ և երբ յաջորդ թուականի յունիս 10-ին աշակերտները (65 հոգի) Ծեմարանի արդէն վերանորոգուած շէնքը փոխադրուեցան կանոնաւոր դաստատութեան համար ամէն ինչ պատրաստ էր Նոյն ամսին տեսուչ էր նշանակուել հայ եկեղեցականութեան մէջ իւր գիտութեամբ և ձիրքերով ամէնից աչքի ընկնող անձը Դարբիէլ արքեպիսկոպոս Այվազեան որ մի քանի նոր հոգեւորական և աշխարհական ուսուցիչներ հրաւիրեց որոշ կերպարանք և ուղղութիւն տուաւ ուսումնականութեան վարչական և դասախարակչական կարգեր ու կանոններ սահմանեց և այսպէս նոր ուսումնական տարին սկսուեցաւ հաստատուն ծրագրով և ամէնքը՝ ուսուցիչ ու աշակերտ մեծ եռանդով գործի կցան 1876 թ.-ի յունիսին և սեպտեմբերին կատարուած քննութիւնները ցոյց տուին որ շատ զգալի յառաջագիմութիւն էր եղել մի տարուայ ընթացքում քրտնաջան Հիմնադիրը մխիթարուած էր վերջապէս իւր կրած նեղութիւնների առաջին պտուղը տեսնելով և արտայայտեց իւր գոհունակութիւնը յունիս 14-ին աշակերտներին ուղղած մի կոնդակով որ իմաստուն խրատների և իւր զաւակների վերայ գործընթացող հօր գործովից զգացումների մի գեղեցիկ հիւստուածք է Դակոս մեծ չէր Տեսչի ինքնագոհութեան զգացումը որ արտայայտուած է Ծեմարանի բացման երկրորդ տարեդարձին նորա կարգացած ծառի մէջ։

Սակայն զժրադարար իրերի այսպիսի կանոնաւոր ընթացքը շատ երկար չչարունակուեցաւ Նրբ Դարբիէլ արքեպիսկոպոս Տրփիսի թեմի առաջնորդ հաստատուեցաւ և հեռուում նստած Ծեմարանը կառավարում

էր մի «կարգապահ» ձեռքով, որին պարբերաբար հրահանգներ էր ուղարկում և տեղեկութիւններ ստանում ամենամանր դէպքերի մասին՝ կարգապահութիւնը կամաց կամաց խանգարուեցաւ: աշակերտներն սկսեցին անհնազանդութեան ապա և յայտնի տանձաւորակութեան նշաններ ցոյց տալ և այն «հոսման» կարգերը, որոնք տանելի էին միայն Այվազեանի պէս գործին նուիրուած և հմուտ կառավարչի անմիջական հսկողութեան ներքոյ, նորա թողած ապիկար վարչութեան ձեռքում անտանելի դառնալով՝ յառաջ բերին մի մեծ անկարգութիւն 1878 թ.-ի փետրուարի վերջին: Այս երկրորդ հարուածը նոյնչափ ծանր էր Ճեմարանի համար, որչափ առաջին տարուայ հրդեհը: Անկարգութեանը մասնակցող բոլոր բարձր կարգի (Ս. դասարանի) աշակերտներն արձակուեցան, որով Ճեմարանը մի տարի յետ մնաց. արձակուեցաւ յուլիս ամսին նաև տեսուչը, ու նորա խմբի անդամներն ըստ մեծի մասին փոխուեցան. կարելի է ասել ամբողջ հաստատութիւնը կերպարանափոխուեցաւ: Թէպէտ այնուհետև շատ ջանք թափուեցաւ խանգարուածը կրկին կարգի տակ դնելու համար՝ հրաւիրուեցան թարմ ուսումնական ուժեր, ինչպէս են Խորէն Ա. Ստեփանէ, Կ. Կոստանեան, Ս. Սարգսեան. բայց բարոյական վերաշինութիւնն աւելի դժուար էր քան նիւթականը: Այվազեանից յետոյ տեսուչ նշանակուած Անդրէաս արքեպիսկոպոս իւր աչքի ընկնող առաքինութեան հետ այնպիսի ընդարձակ ուսումնական և վարչական հմտութիւն չունէր, որ նորա տեղը բռնել կարողանար. ուստի ուսումնական մասի հսկողութիւնն առ ժամանակ Բաստամեան Առհայան վարդապետին յանձնուեցաւ: Երեք տարի այսպէս կաղեկող գնաց գործը. բոլորին շունչ և ուղղութիւն տուող մի ոգի պակասում էր՝ պակասում էր կարգ ու կանոն պահպանող մի շրջի ձեռք. իսկ երբ 1880 թ.-ին մասնագիտական բաժնի առաջին լսարանը բացուեցաւ, մի անգամից խիստ զգալի դարձաւ նաև ուսումնական ուժերի պակասութիւնը, ուսանողները բաւարարութիւն չգտնելով եղած դասատուներին, քիչ էր մնում որ թողնէին և հեռանային: Բայց աննկուն Հիմնադիրը, որ

մինչև այդ ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չէր առել՝ մի համարձակ քայլով հանեց իւր ձեռակերտն անձուկ գրութիւնից: Մեր աղգի մէջ գտնուած սակաւագուր ուսումնականները դժուարանում էին իրենց ապահով տեղերը թողնել, Աղարչապատի պէս մի խուլ անկիւնում գործելու համար. հարկաւոր էր նոցա դիւրութիւններ տալ և որպէս զի բոլոր առարկութիւնների առաջը մի անգամից փակուած լինի՝ որոշուեցաւ Ճեմարան գալցանկացողներին այնպիսի ռոճիկներ առաջարկել, որոնք մեր մատաղ դպրոցական կեանքի մէջ ահագին պէտք է համարուին: Վանքը յիշուի իւր սուղ միջոցներով դժուարութեամբ կկարողանար տալ այդ մեծ ռոճիկները, բայց եթէ լաւ մտածենք, ինչ առանձին նշանակութիւն ունէր նիւթական զոհողութիւնը այսպիսի մի վտեմ հոգեւոր գործ փոխարինող փոխելու համար. քանի՞ քանի՞ աւելի խոշոր դամարներ են գնացել հենց այս վերջին մի երկու տասնեակ տարիներում՝ առանց արդիւնքի, մինչ այս անգամ՝ արդիւնքն ակներև էր: 1881 թ.-ի ուսումնական տարուայ սկիզբին Տիխոնից հրաւիրուած Ա. Սահակեան իւր խմբով մի նոր հոսանք մտցրեց Ճեմարանի մէջ, որով նա սկսաւ բարձրագոյն դպրոցի կերպարանը ստանալ և բաւարարութիւն տալ ներքին ու արտաքին պահանջներին: Իսկ այդ խիստ կարեւոր գործ էր:

Ժանր է ինձ շարունակել այստեղից Ճեմարանի պատմութիւնը, թէպէտ իրօք աւելի զիւրին պէտք է լինէր այդ մի մարդու համար, որ հեռեկալ տարիների մեծագոյն մասը նորա յարկի տակ է անցրել և քայլ առ քայլ հետեւել նորա ընթացքին. բայց նոյն իսկ այդ անմիջական կենդանի մասնակցութիւնը ձեմարանական կեանքի մէջ դժուարացնում է խօսել այնպէս, որ խօսածը անձնական հիմարութիւն և կողմնակալ Այլ տարիներն այնչափ թարմ են նաև ապրող սերունդի յիշողութեան մէջ, որ բաւական պէտք է համարեմ նոցանից զխաւոր կէտերը միայն յիշել:— Դնչպէս գիտէք, Ճեմարանի հոգեւոր Հիմնադիրն չէր վիճակուած նորա ուսման ընթացքը իւր լրման կէտին հասած տեսնել. 1882 թ.-ի դեկտ. 6-ին, այն ուսումնական տարուայ մէջ,

երբ առաջին շրջանաւարանները պէտք է ելնէին՝ նա կնքեց իւր մահկանացուն։ իւր ձեռակերտի խնամածութեան հոգը աւանդ թողնելով Մայր Աթոռի միաբանութեան և իւր արժանընտիր յաջորդներին։ Այնուհետեւ հայրապետական աթոռի շուրջ կատարուած փոփոխութիւններն արձագանգ գտան Ծնմարանի ներքին կեանքի մէջ, և մի քանի անգամ կրկին դժպտեհ՝ արկածներ ու կարեւոր փոփոխութիւններ յառաջ բերին։ 1884 թ.-ին արձակուեցաւ Մահապետեան իւր խմբով և երկու տարուայ խառն ժամանակամիջոցից յետոյ, երբ հաստատութիւնը մի ձեռքից միւսն անցաւ, առանց հարկաւոր խաղաղութիւնը գտնելու՝ վերադարձաւ կրկին 1886 թ.-ին նոր Հայրապետի հրաւերով, նոր պայմաններով։ Այս անգամ Ծնմարանի պահանջներն ու շրջապատող հանգամանքներն ևս ուրիշ էին։— Եթէ նախորդ շրջանները ուսումնական տեսակէտից բնորոշել կամենանք, պէտք է նկատենք, որ Գարբիէլ արքեպիսկոպոսի օրով Ծնմարանում իշխում էր լեզուական կրթութիւնը՝ ուսուցման կենտրոն կազմում էր հայոց լեզուն։ Ինքը տեսուչը հմուտ լեզուագէտ լինելով, սիրահար մանաւանդ հայերէնի, ունենալով նաեւ ձեռքի տակ այնպիսի աշակերտներ միայն, որոնք դեռ դպրոցական շրջանից չէին ելել, ուր լեզուներն ըստ ինքեան գերակշռող տեղ են բռնում՝ ամենամեծ ուշադրութիւն էր դարձնում մայրենի լեզուի դասատուութեան ու վարժութիւնների վերայ, և յիշաւ այդ շրջանի սաները աչքի են ընկնում մինչև այժմ իբրեւ լաւ հայագէտ—գրաբարագէտներ։ Երբ Մահապետեան տեսուչ հրաւիրուեցաւ՝ Հայոց ծխական դպրոցների ծաղկման ժամանակն էր, ուսման սէրը զարթել էր մեր ժողովրդի մէջ և դպրոցը ուշադրութեան զխաւոր առարկայ էր ամէնքի համար։ Նորա խմբի մէջ էր մեր ամէնից հմուտ և անուանի մանկավարժը, խմբի միւս անդամներն ևս մեծ մասամբ փիլիսոփայական կրթութիւն ստացած (բառի ընդարձակ նշանակութեամբ, որ իւր մէջ է առնում գրականութիւն, պատմութիւն և ինչ) մարդիկ էին։ Ուստի այս շրջանում փիլիսոփայական կրթութիւնը տիրապետող դարձաւ՝ կենտրոն ու-

նենալով մանկավարժութիւնը։ Ծնմարանի լաւ րանական բաժինն անցած սաները, թէպէտ շատ բանով դեռ անպատրաստ երբ եւրոպական դիտութեան ու ինքնուրոյն աշխատութեան ծաշակ առան, առանձին եռանդով պարպել սկսեցին մանաւանդ դասատուութեան վարժութիւններով, և նոցանից ելան մեր դպրոցների համար իրենց կոչման համապատասխան ուսուցիչներ ու աւագ ուսուցիչներ։ Մահապետեանի երկրորդ անգամ տեսուչ եկած ժամանակ Ծնմարանը կրկին ծանր տագնապի մէջ էր։ Մահապետեան խումբ ուսումնաւարտներ էր ունեցել, բայց դեռ ոչ ոք չէր յօժարել հոգեւորական կոչումն ընդունել։ Միւս կողմից Մայր Աթոռի միաբանութեան անդամների թիւը տարեցտարի պակասում էր, հոգեւորականի կարիքը աւելի ու աւելի զգալի դառնում իսկ նոցա տեղը լեցնող չկար։ Բնականաբար շատերը հարցնում էին. էլ ինչի՞ համար է Ծնմարանը, եթէ այդ կարիքը չպէտք է լցուցանէ։ Ինչո՞ւ Մայր Աթոռը ամէն զրկման յանձն առնէ այն պահելու համար, եթէ ոչինչ չի ընդունելու նորանից։ Ի՞նչ որ Հիմնադրի նպատակն էր ամէնից առաջ արժանաւոր կուսակիցներ պատրաստել։ Այդ հարցը ո՞չ մի կերպ խեղդել չէր կարելի, և նոր վարչութեան համար կենսական խնդիր էր թէ պէտք է յաջողի՞ արդեօք նորա լուծումը գտնել։

Պարզ էր որ հոգեւոր կոչումը սիրելի ու մատչելի դարձնել կարելի էր միայն հոգեւոր կրթութիւնը կրօնի ուսումը զօրացնելով։ Ծնմարանը բարձրագոյն դպրոց էր կոչուում, ուրեմն և կրօնի բարձրագոյն ուսում պէտք է աւանդուէր այնտեղ, որ մինչև այդ ժամանակ չէր եղել։ Ամէնից աչքի ընկնող աստուածաբանը մեր մէջ գրեթէ միակ բարձրագոյն կրօնական կրթութիւն ստացած անձը՝ Օրմանեան Սրբազանն էր, Կ. Պոլսոյ արդի Ամեն. Պատրիարքը, և նա 1887 թ.-ին ուսուցիչ հրաւիրուեցաւ թէև նորա գործունէութիւնը երկարատեւ չեղաւ և նա ստիպուած էր տարուայ վերջին հայրենիք վերադառնալ, բայց ց'ցումը տրուած էր. բոլորի պահանջը, ընդհանուր բաղձանքը, վարչութեան ջանքերը և մանաւանդ տեսլի կենդանի օրինակը այն ազդե-

ցութիւնն ունեցան, որ 1889 թ. յունիսին երեք սաներ նորա հետ կուսակիւսն սարկաւադ ձեռնադրուեցան և ճանապարհ հարթուեցաւ Ծեմարանի ու Միարանութեան մէջ: Միաժամանակ հոգ տարուեցաւ մի ուրիշ մեծ կարիք լցուցանելու մասին: Ծեմարանի ապահովութիւնը վտանգող մի հանդամանքն ևս այն էր, որ նա հաստատուն ուսուցչական խումբ չունէր: մի քանի կարեւորագոյն առարկաների համար մանաւանդ զաստու գտնել չէր կարող և ստիպուած էր շատ անգամ յարմարուել պատահական անձանց գիտութեանը: փոխանակ նոցանից իւր պէտքերին համապատասխան գիտութիւն պահանջելու հարկաւոր էր Ծեմարանի սաներից ուսուցիչներ պատրաստել նորա համար. այդ միտքը առաջ ևս եղել էր: Բայց չէր իրագործուել զի աւերակ էր այն պատճառով, որ վստահութիւն չունէի: Թէ աշխարհական անկախ մարդը ազգային հաշուով համալսարանական կրթութիւն ձեռք բերելուց յետոյ կգայ անպատճառ Ծեմարանին կծառայէ: Այժմ երբ կուսակիւսն սաներ կային՝ այդպիսի կասկած չէր մնում այլ ևս. նոցանից երկուսը նոյն աշնան արտասահման ուղարկուեցան:— Իրերի այս ընթացքը կրկին մեծ փոփոխութիւն կրեց Հայրապետի մահով. վարչութիւն և ուսուցիչներ փոխուեցան և փորձեր եղան նոր ուղղութիւն: նոր հոսանք, նոր կարգեր մտցնել Ծեմարանի մէջ. Բայց տեական արդիւնք չունեցան: Նոյն Ս. Օծութիւն մեր Վեհափառ Հայրապետը կաթողիկոսական աթոռ բարձրանալու օրից ի վեր իւր հայրական խնամոց առարկայ դարձնելով Ծեմարանը՝ կամեցաւ կրկին Հիմնադրի գծած շաւղի մէջ դնել այն և իսկական հոգեւոր կրթարանի կերպարանք տալ: 1894 թ. ին հրաւիրուեցաւ Պ. Կոստանեան, որ բոլորովին նոր խումբ կազմեց և հինգ տարուայ տեսչութիւնից յետոյ թողեց այդ հաստատութիւնը ահա այս փիճակի մէջ, որ տեսնում էք: Ներկայ վերջին շրջանի մասին այսչափ միայն կարող եմ ասել, որ Վարչութեան ձգտումն եղել է Ծեմարանի ուսման ծրագիրը մոտեցնել պետութեան իւր հոգեւոր ձեմարանների համար մշակած ծրագրին՝ կրօնի ուսուցման կենտրոնական տեղ տալով և ան-

ուշադիր չթողնելով միանգամայն մեր ժողովրդի ու եկեղեցւոյ ինքնուրոյն պահանջները. իսկ ընդհանուր կրթութիւնը վարել այնպէս, որ իրենց կոչման համար ըստ կարելոյն պատրաստ հոգեւորականներ ելնեն այստեղից: Յիրաւի գուցէ կարելիութեան սահմանն այս գէպքում աւելի նեղ է գծուած եղել, քան շատերը կցանկանային. Բայց Ծեմարանի վարիչները գերադասել են ձեռքից եկածն անել, քան ամէն տեղի ու անտեղի պահանջի ահանջ կախելով՝ ուժերը ցրուել և ոչ մի նպատակի չհասնել: Թէ որքան նոքա իրենք նպատակին հասել են, կամ թէ ինչ չափով բարւոք փիճակի մէջ է այժմ Ծեմարանը՝ դատել իրաւունք չեմ համարում ինձ. Բայց եթէ մի երաշխիք հարկաւոր է հասարակութեան վստահ լինելու համար, որ նա հաւատարիմ ձեռքերում է գտնուում կարելի էր այն յիշել, որ նորա այժմեան 19 պաշտօնականներից 6 հոգի միայն իւր սաներից չեն. մնացած 13 հոգին աւելի կամ պակաս չափով վայելել են նորա խնամքը, և ուրիշն են թաղրել պէտք է, որ ծառայում են նորան սրտի մտօք:

Այս ընդհանուր ակնարկից յետոյ Ծեմարանի քսանեւհինգամեայ պատմութեան ազատ ստուերագրիծը լրացրած լինելու համար՝ անյննք անունների և թուերի:

Սուրբիաս Սրբազանի առժամանակեայ փոխ. տեսչութիւնը չհաշուած՝ ձեմարանը մինչև այժմ եօթ տեսուչներ է ունեցել. Գարրիէլ արքեպիսկոպոս 1875—78 թ. Անդրէաս արքեպիսկոպոս 1878—81 թ. Արշակ Նահապետեան (Նահապետ արեղայ) 1881—84 և 1886—91 թ. Գրիգոր եպիսկոպոս Աղափրեան 1884 85 թ. Ն. Խոսրովեան 1885—86 թ. Սարգիս եպիսկոպոս 1891—92 և 1893—94 թ. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան 1892—93 թ. և Ն. Առտանեանց 1894—99 թ.: Այլ և Ն. Խոսրովեանի օրով ժամանակաւորապէս վերատեսուչ է եղել Մեսրոպ եպիսկոպոս. տեսուչ նշանակուել են և շատ կարճ միջոցից յետոյ փոխուել Մեսրոպ վարդ. Ճերմակեան և Վահան վարդ. Տէր Գրիգորեան:

Տեսչի օգնականութեան պաշտօն վարել են Գարրիէլ արքեպիսկոպոսի տեսչութեան ներքոյ կարճ ժամանակ Սուրբիաս վարդապետ (արքեպիսկոպոս) ապա կարգապահ անունով Յ. Գայտեան. Անդրէաս արքեպիսկոպոսի տեսչութեան ներքոյ Վա-

Հան փարզապետ՝ ուսումնապետ անունով Սարգիս և Արիստակէս եպիսկոպոսների օրով Ե. Սաղաթէլեան. և նուազստ Կ. Կոստանեանի օրով:

Ուսուցիչ եղել են 90 հոգի՝ բացի վերակացուներից՝ թուով 32, որոնցից շատերը, ինչպէս և տեսուչներից ոմանք դասեր ևս ունեցել են:

Պաշտօնապէս ձեմարանի բժիշկ ճանաչուել են՝ Տէր Մինասեան Զաքարիա 1876—79 թ. Տէր Գրիգորեան Գրիգոր 1879—82 թ. Տէր Գասպարեան Եփրեմ 1883 թ. Զարգարեանց Միքայէլ 1884—93 թ. Վարդանեան Արմենակ 1893—95 թ. Տէր Խաչատրեան Կարապետ 1895 թ.-ից ցայժմ: Այլև 1877 յունիս—օգոստոս ամիսներում միաբանութեան և ձեմարանի համար մասնաւոր յանձնարարութեամբ բժիշկ կարգուած է եղել Բ. Նաւասարդեան: Եւ յաճախ բժշկի պակասութեան կամ բացակայութեան պատճառով գիմել են գաւառական բժիշկների:

Մինչև անցեալ տարուայ վերջը ձեմարան ընդունուած բոլոր աշակերտների ընդհանուր թիւն է՝

1126

Ըստ Հայոց եկեղ. վարչութեան

բաժանուած	
Երեւանի թեմ . . .	557
Տփլիսի » . . .	137
Արցախի » . . .	113
Շամախույ » . . .	24
Աստրախանի » . . .	36
Բեսարաբիոյ » . . .	65
Տաճկահայք . . .	160
Պարսկահայք . . .	34

Ինչպէս յիշուեցաւ, ձեմարանը շինուած էր 75 աշակերտների համար, իսկ բացման միջոցին կային միայն 59 աշ. ապա երբ հիւանդանոցը տեղափոխուեցաւ առանձին շէնքի մէջ և յարմարութիւններն աւելացան՝ հնարուորութիւն կար նոցա թիւը հետզհետեւ բազմացնելու: այնպէս որ Ա. խարան բացուած միջոցին 1880 թ.-ին, աշակերտների թիւն էր 133, հիմնական կանոնների համաձայն բոլորեքեան գիշերօթիկ, Իսկ երբ առանձին նշարան ևս պատրաստուեցաւ, Նախագետեանի տեսչութեան ժամանակ կարիք եղաւ գործնական մանկավարժութեան համար ստորին բաժանմունքներ բանալ, որից պէտք զգացուեցաւ նաև երթևեկի աշակերտների. — ապա հին Ժառանգաւորաց ուսումնարանը փակուեցաւ, որ մինչև 1882 թ.-ը շատ խեղճ կերպով շարունակել էր իւր գոյութիւնը, և նորա սաների մի մասն ևս ձեմարան ընդունուեցան՝ նոյն այդ թ.-ին, երբ առաջին անգամ ձեմարանի դասընթացը լրանում էր՝ աշակերտների ընդհանուր թիւը բազմապատկուելով հասաւ մինչև 336՝ 219 գիշերօթիկ և 115 երթևեկ. մի թիւ որ ամէնից բարձրն է եղել այս 25 տարուայ ժամանակամիջոցում: Բայց յաջորդ տարին իսկ հարկ տես-

նուեցաւ փակել Ա. և Բ. բաժանմունքները, և միայն Գ. բաժանմունք պահել, կրճատելով առ հասարակ աշակերտների թիւը, որով մնացին 226 հոգի, նոցանից միայն 179 գիշերօթիկ, 1885 թ.-ին նոցա թիւը հասաւ 242-ի, որից 192 գիշերօթիկ, բայց յաջորդ 1886 թ.-ին Ա. և Բ. դասարանները փակուեցան, երթևեկութիւնը վերջացրին և գիշերօթիկ աշակերտների թիւը մի անգամից իջաւ մինչև 96, Այնուհետև հետզհետեւ կրկին բարձրանում է, ընդունուում են նորից երթևեկներ, և 1893-ին աշակերտաց ընդհանուր թիւն էր 201. իսկ ներկայումս ընդհ. թիւը հասել է մինչև 239, որից 217 գիշերօթիկ, բայց դեռ հեռու տեղերից սպասուող հին և նոր աշակերտներ կան, * այնպէս որ այս ուսումն. թուականին ձեմարանը կունենայ ամենամեծ թուով գիշերօթիկ աշակերտների, քան երբ և իցե եղել է: **

Գալով տնտեսական դրութեան՝ որչափ և կրցանկանայինք այս մասին եղած անտեղի տարակոյսները փարատել, պէտք է այնուամենայնիւ նկատենք, որ ճշգրիտ գաղափար տալ անհնարին է, որովհետև ձեմարանի և վանքի ծախսոց մէջ սովորաբար խրտութիւն չի տրուել. բացի այն որ կերակրեղէնի ծախքը միշտ վանքն է հոգացել, միւսներից ևս երբեմն այս երբեմն այն մասը ձեմարանի վարչութեան ձեռքից վանական կառավարութեան է անցել և ընդհակառակն: Մինչև 1893 թ. ձեմարանի վարչութեան ձեռքով տրուել են միայն պաշտօնէից (տեսուչ, ուսուցիչների, վերակացուք, բժիշկների, ծառաներ) առձիկները, որոնց համար և միայն ճիշտ հաշիւներ գտնել կարելի է ձեմարանի դիւանատան մէջ: Ըստ այսմ 1875/76 թ.-ին ծախք եղել է 7,862 ռ. 47 կ. յաջորդ տարին 9948 ռ. 83 կ. և այսպէս հետզհետեւ բարձրացել է մինչև 1880/81 թ., երբ ծախսոց գումարն էր 19,500 ռ. 70 կ. Թաջորդ տարին մի անգամից 34,835 ռ. 71 կ.-ի է հասնում, երբ այնպիսի մեծ առձիկներ են տրուում պաշտօնականներին, ապա 1883/84 թ.-ին 30,549 ռ. 13 կ. է իջնում. և 1884/85 թ. կրկին մի անգամից իջնում է 23,007 ռ. 2 կ. և այդպէս 25 և 19 հազարի մէջ մնում է մինչև 1894 թ.-ը, երբ ընդհանուր ծախսոց համար նախահաշիւ է հաստատուում, և մինչև մեր օրերը: Այդ թուականից ի վեր կազմուած նախահաշիւն-

* Եկամ յիշուի անկի քան սպասուում էր և լնայելով որ եկամուտ ևս եղան այժմ արդէն 225 զիշ. է հաշուում. դեռ մի քանի հոգի երբեք չի վճարել մէջ են միայն ներս ձեռք չի նկատու պատճառով:

** Անկի պարզ կլինէր հարկաւ այս հաշիւները տախսակով ներկայացրած, բայց որովհետև յիշուողի խոսակցութեան մէջ տախսակի տալ կարելի չէր, մեծ յառաջ ենք յիշում այնպէս, ինչպէս խոսուել է:

րը, որոնց մէջ մտնում են պաշտօնէից ոտձիկներ, աշակերտների հանդերձեղինաց, ուսումնական պիտոյից, թէյի, հիւանդանոցի, վառելիքի և ընծախ-քերը, բացի կերակրեղէնից՝ հետեւեալներն են.

1894 թ. — 38000 ռ.
1895 թ. — 36071 ռ.
1896 թ. — 37075 ռ. 75 կ.
1897 թ. — 34000 ռ.
1898 թ. — 39000 ռ.
1899 թ. — 40900 ռ.

Իսկական ծախքը նախահաշուից մի քանի տարի պակաս է եղել, բայց աւելի ոչ մի անգամ, Վերջին երկու տարիների նախահաշուի մէջ միտնում է նաև մի քանի համալսարանական կրթութիւն ստացող սանների թոշակը (2600 ռ. նախորդ տարուայ համար), ներկայ տարւոյս նախահաշուը չգործադրուեցաւ:

Թող հայ հասարակութիւնը խղճով դատէ, թէ որչափ անհաշիւ կերպով են գործ դրուում եկեղեցական—ազգային դրամները ձեւարանի վերայ և որչափ անհեղի ծախք է լինում 220—250 չքաւոր և որը հայ մանուկներ մտաւորապէս ու բարոյապէս կրթելու՝ եկեղեցւոյ արժանաւոր սպասաւորներ և հասարակութեան պիտանի անդամներ պատրաստելու համար:

Ձեւարանի բոլոր սաներն, ինչպէս յայտնի է՝ ուսնում են ձրի, և շատ քչերից համար միայն դրամական նպաստ է տրուում բարերարների կամ ունեւոր ծնողաց կողմից: * Մնացած ծախքի ամբողջ ծանուցութիւնն ընկնում է Մայր Աթոռի վերայ, որ նա հոգացել է մասամբ իւր նախնական՝ մասամբ Գէորգ Գ. ի տնտեսագիտական հանձարով ստեղծած եկամուտներից, և մասամբ այս 25 տարիների ընթացքում՝ յանուն ձեւարանի եղած դանազան նուիրաբերութիւններից, Առաջին տարիների աչքի ընկնող նուիրաբերութիւններից կարելի է յիշել՝ Ն. Նախիջևան քաղաքի կողմից 5 որդեգրի թոշակ 1500 ռ. Նոյն տեղի Բարեգործական ընկերութեան կողմից 1 որդեգրի թոշակ 300 ռ. Ղզլար քաղաքից 2 որդեգրի և Մոզդուկից 1 որդեգրի թոշակ. որոնց ոչ մէկը դժբաղդարար այժմ չի վճարուում: Թէպէտ այդ տեղերից՝ մանաւանդ Ն. Նախիջևանից, ձեւարանը աշակերտներ միշտ ունեցել է, որոնք ուսել են ուրեմն ուրիշ աւելի չքաւոր տեղերի հաշտին: Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցին վճարում է մինչև այժմ տարեկան 2000 ռ. Սարգիս արքեպիսկոպոս Զալալեան խոստացել էր իւր ոտձիկից 1000 ռ.

* 1898/99 ուսումն. շրջանում ձեւարանի վարչութեան կողմից Սինոդին ներկայացրած այդ նպաստների գումար եղել է 1850 ռուբլի, որից 1200 ռ. բարերարների և 650 ծնողաց վճարած: Այդ հաշտի մէջ չեն հաշոււ միլիոնաց նուիրաբերութիւններ կամ մշակամ ուղեգրների քոշակներ:

նուիրել տարեկան մինչև մահը. ազգային բարերարներ՝ Յովնանեան և Սանասարեան, ինչպէս և բարկիշատակ Յ. Իզմիրեան՝ ուրիշ ազգ. հաստատութիւնների վերայ դարձրած լինելով հանդերձ իրենց խնամքը՝ չեն խնայել իրենց օգնութիւնը դրամ. գիրք, ուսումնական պիտոյք, նուիրելով, ամէն անգամ երբ Հոգեւոյս Հիմնադիրը դիմել է նոցա, Գէորգ արքեպիսկոպոս Ա. հասպետեան 18000 ռ. ժառանգութիւն թողնելով՝ երկու որդեգրի մշտական թոշակ, և Անդրէաս արքեպիսկոպոս մի որդեգրի մշտական թոշակ, համարուել են ձեւարանի մշտնջենաւոր բարերարներ: Վերջին ժամանակից կարող ենք յիշել Ազգիս Ա. հասպետ Հայրապետի առանձին հոգածութեան շնորհիւ Պետերբուրգի եկեղեցիներից ստացուած տարեկան 5000 ռ. նպաստը, բիշկ Տիգրանեանի կտակը, 10000 ռ. նուէր տ. Հ. Մելիքեանի կողմից ի յիշատակ իւր ամուսնոյ, Խուդատեանի կտակը և ընդ ձեւարանի մատենադարանի համար շատ տարիներէ ի վեր հոգ է տանում առանձնապէս Ազն. Պ. Կ. Եղեանց, որի թէ իւր կողմից և թէ Յ. Իզմիրեանցի հաշտին ուղարկած գրքերը նորա հիմն. մասի զխաւոր ծոխութիւնն են կազմում:

Յիշելի են այստեղ նաև այն եկեղեցական գործիչները, որոնք իրենց Հայրապետի աննարկին հետեւելով աշխատել են ամէն կերպ համոզելու և յորդորելու չրջագառող ժողովրդեան, որ չինայէ իւր լուսման Մայր Աթոռի կարիքների համար, և փոքրիկ նուէրներով երբեմն խոշոր գումարներ են հանգանակել: Այդպիսիք են օրինակ ձեւարանի գոյութեան առաջին շրջանից Յ. ա. ք. Բուխլաթեան Աստրախանում և Յ. ա. ք. Կոստանեան Աղեքսանդրապոլում: Արիստակէս վարդ. (այժմ արքեպիսկոպոս) Դաւթեան փոխ. նոր Նախիջևանի, Խորեն վարդ. (այժմ եպիսկոպոս) Սեփանէ՝ նուիրակ, և այլք: Դժբաղդարար այդպիսիների թիւը, ինչպէս հասարակութեան ջերմեռանդութիւնը դէպի Մայր Աթոռն ու նորա ձեւարանը՝ առաջին շրջանում աւելի է եղել, քան այժմ ենք տեսնում: Ինչքան է եռանդի այդպիսի պակասութիւնը, միթէ յիշուի նորանից, որ ձեւարանն իւր քսան և հինգամեայ պատմութեամբ իրրե մի ապարդիւն հաստատութիւն է հանդիսացել՝ անարժան այն շնորհներին, որ վայելում է հայ եկեղեցւոյ և ժողովրդի կողմից, Այդ հարցին պատասխանելու համար պէտք է նորա արդիւնքը չափել. բայց ո՞վ կարող է գորա ճիշտ չափը որոշել, Դիւրին է միայն կրկին մի քանի թուանշաններ տալ:

Ձեւարանն ունեցել է մինչև այժմ 119 ընթացաւարտ մանագիտական բաժնից և 165 դպրանոցական քաժնից. այս վերջինների մի մասը եղել է նաև լսարաններում: Կատարեալ ընթացաւարտներից 18 հոգի կուսակրօն հոգեւորականութեան

կոչումն են ընդունել. քահանայութիւնն որչափ գիտենք, 8 հոգի. Գպրանոցական բաժինն աւարտողներէց կուսակրօն են 3 հոգի, քահանայ 14, 3 հոգի կուսակրօն և բաւական թուով քահանաներ կան նաև թերի ելածներէց, Հաւանականաբար ուսումնաւարտների մէջ կան ուրիշ քահանայ եղածներ, որոնց մասին տեղեկութիւն չունինք. այլև շատերը, որոնք այսուհետև հոգևոր կոչումն կընդունեն, Առ այժմ ուրեմն բոլոր ձեմարան մտած աշակերտների 1/4 մասը միայն գպրոցական բաժինն աւարտել է * (1/10 մասն ամբողջ ընթացքը) և նոցանից 1/6 մասը հոգևորական դարձել:

Ով ձեմարանի արդիւնքը այսպէս թուանշաններով է չափում և աչքի տեսածով գնահատութիւն անում, առանց բաղմամբիւ խոշոր ու մանր հանգամանքներ կշռելու՝ սխալ եզրակացութեան կ'յանգի անշուշտ: Գանգատուում են, որ ձեմարանը քիչ թուով հոգևորականներ է ընծայել, և նոքա աչքի ընկնող գործ չեն կատարել, Յիշեցինք, թէ ինչ պատճառներով և ինչպէս ուշ ձեմարանականները ոտք կոխեցին եկեղեցական ասպարիզի վերայ. մտածել, որ նոքա մի քանի տարուայ մէջ յեղափոխութիւն պէտք է ձգէին, անտեղի է հարկաւ. զեռ նոյն իսկ կոչումն ընդունածներից շատերը գործի մէջ չեն մտել, Բայց սակաւամբիւ մտողները պարապ չեն մնացել, կարծեմ, կամ անպատուութիւն բերել իրենց կոչման, եթէ պակասութիւններ շատ են ունեցել՝ պէտք է մոռանալ, որ ամէն պտղատու ծառի երկխայրիքը խոհ է լինում, Պէտք է մոռանալ մանաւանդ, որ ձեմարանը մեծ չէր է, եթէ մէկը մի քանի ամսուայ մէջ մի խրճիթ է շինում ու տեղաւորուում մէջը՝ իրաւունք չունի ծաղրելու հարեանին, որ տարիներով բնակարան է շինում և դեռ ծածքը մնացել է. մեծ չէնքը պահանջներ շատ ունի, որոնց բաւականութիւն տալու համար մեծ քանք ու համբերութիւն է հարկաւոր, և ով պալատ է կամենում շինել և ո՛չ խրճիթ՝ պէտք է այդ քանքը գործ գնէ և այդ համբերութիւնն ունենայ, — Գանգատուում են, որ ուսումնաւարտներ քիչ են ելել ձեմարանից և ելնողներն իրենց կոչման չեն ծառայել, Չեւքի տակ այնպիսի հաշիւներ չունինք, որոնցով ցոյց տալ կարողանայինք, թէ մեր երկրի ուրիշ գպրոցական հաստատութիւնները ուսումնաւարտների որպիսի տոկոս են ընծայել, Բայց չենք կարծում, որ ձեմարանը վերջին տեղը բռնէ նոցա մէջ, Պէտք է չմոռանալ միևնոյն ժամանակ, որ այստեղ գալիս են գլխաւորապէս ժողովրդի հասարակ դասի զաւակները ընտանեկան կրթ-

ութութիւնից զուրկ, անպատրաստ, աշխարհի մի խուլ անկիւնից ելած մանուկներ, և որ յաճախ հարկաւոր է լինում զիջումներ անել որրի ու հետուից եկածի, քահանայորդու և այլ նման պատճառներով ազգային խնամքի կարօտ մանուկների համար, Մինչև այս խոռն ժողովը կարգի տակ գնելն ու նպատակի հասցնելը՝ բնականաբար շատերը ձանապարհին կ'մնան. այլև տեղ հասնողներն ուսում անելով չեն կորցնի այն միջավայրի գրոշմը, որից ելել են, Բայց եթէ նոքա այդպիսով քիչ են աչքի ընկնում կեանքի մէջ՝ միթէ ապացոյց է, որ ոչինչ չեն գործում, Մեր ծխական գպրոցների փակուելուց առաջ ձեմարանականների մեծագոյն մասը ուսուցչութեամբ էր պարապում, այսօր ձեմարանի հետ թեմական գպրանոցներում որոնցից երկուսի տեսուչները նոյնպէս ձեմարանական են՝ նոքա որոշ տեղ են բռնում, որ անպատուաբեր չէ ձեմարանի աւուան, ունին նաև բաւական թուով ներկայացուցիչներ պետական ուսումնարաններում, չհաշուած տաճկահայոց և պարսկահայոց մէջ գործողներին: Այդ երկրների ամենախաւար և ամենահետու գաւառներում գուք կգտնէք ձեմարանականներ, որոնք գուցէ ամենաբարեխիղճ և իրենց կոչման համար պատրաստ ուսուցիչներն են, թէպէտ նոցա անունները յայտնի չեն լրագրներում, Աւսուցչութիւնն այնպիսի ասպարէզ է, որ շատ խօսել չէ տալիս իւր մասին ու արդիւնք բերում է, Շատ խօսել չեն տալիս իրենց մասին նաև այն ձեմարանականները, որոնք գրական ասպարիզի վերայ երևացել են, Բայց աչքը մի քիչ շուրջ ածել պէտք է, տեսնելու համար, թէ նոքա կան ու գործ կատարում են, — Մի տարօրինակ կարծիք կայ տարածուած, իբր ձեմարանի սաները հայերէն չգիտեն, Հաշուեցէք հրապարակի վերայ գտնուած բոլոր այն մարդոց, որոնք փոքրի շատե կանոնաւոր հայերէն են գրում, հայոց պատմութիւնից և գրականութիւնից տեղեկութիւն ունին, և կհամոզուիք, որ ձեմարանականները փոքր տոկոս չեն կազմում նոցա մէջ, Իսկ այնպիսիները, որոնք հրապարակի վերայ չեն, Բայց մաքուր հայերէն են խօսում և իրենց շրջապատողներին սովորեցնում, — Մարդիկ կան, որոնց ներկայութիւնը զգալի է՝ բացակայութիւնը խիստ զգալի կլինէր, ձեմարանականները մեծ մասամբ այդ կարգին են պատկանում: Արդարև կեանքի զանազան բերմունքները ստիպել են շատերին իրենց ստացած կրթութեան անհամապատասխան ասպարէզներ ընտրել, և այսօր գրեթէ ամէն տեսակ ասպարիզի վերայ կարելի է գտնել ձեմարանի նախկին սաներից, Բայց որ աւելի նպատաւոր պայմաններում գտնուող հաստատութեան նոյնը չի պատահում, Ծանկալի էր հարկաւ, որ այդպէս չլինէր, որ ձեմարանականը գերազատէր յետին գիւղում քահանայ

* Ի նկատի պէտք է ունենալ, որ աշակերտաց ընդհանուր բութի մէջ նաշուած են նաև այժմեաններ, որոնցից յոյս ունինք շատ շատերն ուսումնաւարտ պիտ կ'ենեն:

լինել, քան քաղաքում գործակատար, և մենք համարում ենք, որ կարելի պէտք է լինի հետզհետե կրթութեան միջոցաւ այդպիսի հակում գորացնել: * Եւ այն բոլորովին կորած համարելու չէ հարկաւ թէ այն ուսումնականներն՝ որոնք անմիջական կերպով հասարակութեան օգտին չեն ծառայում, և թէ թերութեան վերայ եղած խնամքը, Ինչպէս յայտնի է, դպրոցում անպիտան համարումները երբեմն պիտանի ու օգտակար մարդիկ են լինում կեանքում: Իսկ մեր ժողովուրդն առհասարակ այնպիսի պայմանների մէջ է գտնուում, որ ճեմարանականները, սակաւ բացառութեամբ, նորա բարոյական կեանքի միջնորդաբար բարեխառնող տարր պէտք է համարուեն:

Աերջապէս, ինչ կողմից և առնելու լինենք՝ կարող է արգեօք գտնուել մէկը, որ հանդիսա խղճով և լուրջ գատողութեամբ պնդէ, թէ ճեմարանը արժանի չէ հայ ժողովրդի խորին ուշադրութեան և անկեղծ համակրութեան, որովհետեւ արդիւնք չէ տուել կամ չենք արդիւնք է ունեցել: Մենք չգիտենք մի ուրիշ ազգային հաստատութիւն, որ իւր նպատակի վստահութեամբ և ցոյց տուած ու խոստացած արդիւնքի մեծութեամբ աւելի մեծ համակրութեան և ուշադրութեան արժանի լինէր: Իսկ ժողովրդի համակրութեան պէտքը շատ զգալի է նորա համար՝ աւելի զգալի գուցէ քան ուրիշ որեւէ կարիք:

Թե՛նա որոշ չափով համակրութիւն վստահել է արդէն՝ ապացոյց կարող են համարուել այն բազմութիւն շնորհաւորութիւնները, որոնք ներկայ տօնի առթիւ սկսել են անզու զանազան կողմերից եկած հեռագիրներով: Մենք պարտք ենք համարում առանձին շնորհակալութեամբ յիշել այստեղ այն պատ. անձանց անունները, որոնք շտապել են գործնականապէս ցոյց տալ իրենց համակրութիւնը, դրամական և այլ նուէրներ ուղարկելով ճեմարանին: Այդպիսիք են՝

- ա) Գեր ներսէս արքեպիսկոպոս, նորընտիր առաջնորդ Բեաքարաբոյ և Ն. Նախիջևանի, Նորին Աւհարառութեան ազգիս Սրբազնագոյն Հայրապետի մեծագիր կենդանագիրը ճեմարանի հանդիսարանի համար նկարելու շնորհատակով նուիրում է . . . 400 ր:
- բ) Պ. Կ. Լալայեան, Բագուից՝ միանուագ 1000 ր:
- գ) Արժ. Սիոն վարդապետ, Փոխ. Հին Նախիջևանի, հանգանակելով իւր հօտից (Հին Նախիջևան քաղաքից 134 ր. 50 կ. Վերին Ագուլիսից 313 ր. 8 ղնայ գիւղից 162 ր. 50 կ.

- մի քանի ուրիշ գիւղերից 55 ր.) նուէր է բերել . . . 665 ր:
- դ) Պ. Աղ. Թայիրեանց, Բաթումից՝ միանուագ 300 ր:
- ե) Պ. Զիպիչեան, Մայկոպից՝ բարեկամների շնորհանում հանգանակել ուղարկել է . 200 ր:
- զ) Պ. Գր. Թումանեան, Տփլիսից նուէր է ուղարկել . . . 200 ր:
- է) Բարեշն. Պօղոս քհ. Բեդեկեան, Ն. Նախիջևանից, Նախկին սան ճեմարանի՝ իւր ծխականների մէջ հանգանակութիւն կատարելով գնել, նուէր է բերել մի խաղատոմս արժողութեամբ . . . 212 ր. 75 կ. յաւելուած . . . 7 ր. 50 կ:
- ը) Բարեշն. Ներսէս քհ. Տէր Վարդապետան, նուէր է ստացել Բագուի իւր ծխականներից (պ. Ե. Եղիազարեանց 100 ր. և պ. Ա. Յակոբեանց 50 ր.) և բերել . . . 150 ր:
- ր) Պ. Ն. Սաֆարեան, Բագուից . . . 100 ր:
- ժ) Պ. Միրզաջան Պատուականեան, Շուշուց 40 ր:
- ժա) Արժ. Բարսեղ ա. քհ. Խաչանջևանց, Քիշնեից . . . 25 ր:
- ժբ) Արժ. Մարտիրոս ա. քհ. Յէր Պօղոսեան, Աղէքսանդրապոլից . . . 25 ր:
- ժգ) Պ. Պ. Բուշնարեան և Խիթարեան, Վերջից 10 ր:
- ժդ) ճեմարանի Նախկին սաներ Բալախանուց՝ Գիւլխանդանեանց Արք. 40 ր., Աստ. Գեանջեցեան և Գ. Վարչամեան՝ 30-ական ր. Շիրա Թովհանիսեան և Արամ Գրիգորեան 20-ական ր. ընդամենը . . . 140 ր:
- մե) Նախկին սան Զամրազեան, Վարսից, Հիմնադրի շիրմի վերայ պսակ գնելու նպատակով 25 ր:
- մզ) Նախկին սան Բարեշն. Մ. քհ. Զատիկեան, Օրհնից, բարձր. կրթութիւն ստացող մի ճեմարանականի նպատակաւ առաջարկութեամբ . . . 25 ր:
- մե) Նախկին սան Արժ. Մուշէ վարդապետ, Փոխ. Ն. Նախիջևանի նուիրում է 276 կտոր գիրք:
- մը) Պ. Գր. Տ. Թովհանիսեան—Մուրացան 150 կտոր գիրք:
- մր) Պ. Սարգիս Հախնազարեան, Վ. Ագուլիսից, իրեւ տպագրութեան ծախք մի օրինակելի քարոզադրքի, որի խմբագրութեան պարտքը նուստիս վերայ է դնում և որի արդիւնքը պէտք է գումարուի ճեմարանում նոյնպիսի նպատակներով գործադրուելու համար, նուիրում է 500 ր. *

Սակայն իրաւունք չունէր արգեօք ճեմարանի նման մի հաստատութիւն այսպիսի նշանակալից հանդիսի ժամանակ աւելի առատ և ջերմագին համակրութեան ցոյցեր սպասելու: Զենք

* Օր. վերջին 5 տարիների ճեմարանատեսներից հաշիւ 1—2 հոգի միայն եկեղեցական—կրթական տպարւղից դուրս բաղդ են որոնել, այնուս իրենցից անկախ պատճառներով:

* Բացի այս միևնու թանկ օրը ստացուած կամ խոստացուած նուէրներից եղան այնուհետև հետեւեալ նուիրաւ:

կարող ընդունել: Թէ նորա պակասութիւններն են պատճառ հայ հասարակութեան կողմից հարկաւոր չափով չգնահատուելուն: Այլ որ չի որանում հարկաւ, որ նա ունի խոշոր պակասութիւններ, և մենք նորա յարկի տակ աշխատողներս ամենից լաւ գիտենք: Թէ որչափ հեռու է նա գեա իւր կոչման բարձրութիւնից, որչափ թերութիւններ պէտք է լինելուն և կիսատ միջոցները կ'աւարելագործուին, որպէս զի նա Հայոց եկեղեցւոյ համար իրօք բարձրագոյն հոգեւոր կրթարան դառնայ: Բայց ո՞վ է պատասխանատուն նորա պակասութիւններէ: և իրաւացի է միթէ: որ հասարակութեան այս կամ այն դասը չհաւանելով նորա մի կարգին կամ նորա մէջ գործող մի անձնաւորութեան՝ երես թեքէ նորանից: կայ մի հաստատութիւն, որ ամէնքի պահանջին յարմարուել կարողանայ, և կուղղուի՝ միթէ ընդհանուրին վերաբերեալ գործը, եթէ նորա մասին հոգացողները նուազին, փոխանակ աւելանալու: Համարձակ կարելի է ասել, որ ձեմարանը իւր քսան և հինգ ամեայ գոյութեան ընթացքում միշտ յառաջ է գնացել, և եթէ դժբաղդ արկածներ կամ խանգարիչ հանգամանքներ նորա ընթացքն առժամանակ դանդաղացրել են կամ թիւրել՝ փոխանակ յետագիմելու, նա իւրաքանչիւր անգամ կարծես նոր թափ է ստացել մի նոր մեծ քաջ անելու համար: Այսօր նա այնպիսի կէտի վերայ է կանգնած, որ պատճառ չունի նախանձելու իւր անցեալի որեւէ շրջանին, և յոյսերով ու ակնկալութիւններով լի նա-

րհուրիւններ. եղբ. Ժամանակակից, Մոսկուայից, նուիրում են 5000 ռ.: որի տոկոսով մի մշակման որդեգիր պէտք է պահուի ձեմարանում. եղբ. Տարածական, Եկատերինոպոլից, նուիրում են միւսեւոյց 1000 ռ.: Մասկուայի հայ եկեղեցւոց հոգարարութիւնը խոստանում է պահել մի որդեգիր ցուտաւ ուսման. նոյն եկեղեցւոց ծխականները խոստանում են մի քարէյշուսակ գործ կատարել: Պ. Զաֆար Դեռքեան Երևանից՝ խոստացել է 500 ռուբլի: Սեդեսայի հայ եկեղեցւոյ մի քանի ծխականներ նուիրել են 325 ռ. պ. Միլաս Բերքեան և ընտանիք, ն. Նախիջևանից 100 ռ. պ. Պոլսու Զախեան, նոյն քեղից 100 ռ. պ. Գր. Զախախիթան, Բագուից՝ 100 ռ. Տ. Տիւրուհի Բաւադեան, Եկատերինոպոլից՝ 50 ռ. պ. Բաղդ. Խոջայեան: Պետրոգորսկից՝ 30 ռ. պ. Ա. Տեր Դեռքեան, Ալեքսանդրապոլից՝ 50 ռ. Պ. Մեհարեան, Լախիկն ասն 10 ռ. Յ. Մախուդեան, Լախիկն ասն 10 ռ. Բարեւն. Եղիա Բ. Զոհրաբեան Լախիկն ասն, հին դրամներ: Դեր. Մեսրոպ աբխախիտոս 50 կոնտ մեծագիր և սպացիր զիւր և Դարբիկ աբխախիտոսի գրած ձեռն-ի պատմութեան պատճենը. Դեր. Մակար Եպիսկոպոս 105 օր. իւր հեղինակութիւններից. պ. Պերճ Պոռնեան 100 օր. իւր հեղինակութիւններից ձեմարանի աշակերտներին քաժանելու համար: Տոնից շատ առաջ ստացուել էր Տ. Արամեանից (Բագու) որոշ նպատակի համար 300 ռ:

յում է դէպի ամպագան. — Մինչև այժմ նա կառավարուում էր պետութեան կողմից ժամանակաւորապէս հաստատուած կանոններով. պէտք է յուսաւ որ շուտով կստանայ մշտական կանոնադրութիւն և ճանաչուած կլինի պետութեան մէջ բարձրագոյն կրթարանի բոլոր ընդարձակ իրաւունքներով: Մինչև այժմ նա մի տեսակէ: ուսուցչական խումբ չունէր և ստիպուած էր իւրաքանչիւր ուսուցչի այնչափ դասեր աւել, որ նոքա միջոց չէին գտնում գիտական աշխատութիւններով զբաղուելու: այժմ, երբ նա իւր սեփական սաներից է խումբ պատրաստում և սոցա մէջ աւելանում են հետզհետէ այնպիսիները, որոնք Մայր Աթոռի միաբան լինելով, կարող են քիչ դաս առնել և շատ աշխատութիւն գործ գնել, պէտք է յուսաւ, թէ այդ թերին ևս կլրացուի: Մինչև այժմ նա շարունակ կուր է մղել տնտեսական կարիքների դէմ. թէպէտ այժմ ևս նա ապահոված չէ այդ կողմից և նորա կարիքներն աւելի մեծ են քան երբեք, բայց աւելացել են այդ կարիքները հոգալու միջոցները, և քանի որ ձեմարանը մի պտղատու ծառ է դարձել՝ պէտք է յուսաւ, որ հայ ժողովուրդը նորա պտուղները քաղելով ու ծաշակելով՝ աւելի ու աւելի կսիրէ նորան և նորա բարգաւաճման համար չի խնայի իւր օգնութիւնը:

Բարեմաղթենք որ Ռուսաց Մեծապօր Կայսերի մեր Ամենողորմած Թագաւորի զահը հաստատուն լինի միշտ և անսասան. այն հոգ արծուին, որի թեւերի տակ պաշտպանութիւն է գտնում հայ ժողովուրդը և միջոց քաղաքակրթութեան աշխարհի հետ շփուելու, նորա զիտութեան և արուեստի բարեբը վայելելու՝ անպակաս անէ մեր վերայից իւր հովանին, և նորին Կայսերական Մեծութիւն Նիկողայ Աղէքսանդրովիչ իշխէ երկար տարիներ՝ Քարեփառ Թագաւորութեամբ. առողջ և յամենայն վտանգէ ապաւ. քաղցր և զթած առ ազգս Հայոց:

Օրհնենք ապա ջերմ սրտիւ ու լի բերանով անմահ յեշատակը ոտրա Մեծ Հիմնադրի. օրհնեալ լինի, երկնս և բեր անգամ օրհնեալ արգաւի յեշատակը. ամէն:

Ս. Թաղէոս և Ս. Բարդուղիմէոս առաքելների տօնի երեկոյին Դէորդեան Ճեմարանում կատարուեցաւ ըստ սովորականին զրական երեկոյթ: Երեկոյթը բացուեց քառաձայն երգութեամբ շարականով. երգերից և արտասանութիւններից զատ կարդացուեցան հետեւեալ շարադրութիւնները՝ աշակերտների կողմից: «Առաքելների կոչումը Նոր կտակարանի մէջ, Պետրոս առաքել և Նրա գործունէութիւնը»:

«Ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքելոց
վանքերը» Հանդէսը փակեց Ծմամբանի Հ.
Տեսուչը մի համառօտ բանախօսութեամբ:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

† Տ. Խորէն արքեպիսկոպոս Աշրդեան
Նախկին պատրիարք Կ. Պօլսոյ վախճանեցաւ
քաղցկեղէ՝ 57 տարեկան հասակին մէջ, հոկ-
տեմբերի 26-ին:

Տ. Խորէն Արքեպ. ծնած էր 1842 ին
Նալովայի Բերեմէթ գիւղին մէջ, Նիկիոյ լճին
եզիրքը. իւր աշխարհական անունն էր Սե-
րովբէ. ինը տարեկան հասակին մէջ մտած
է Արմաշու ս. Աստուածածնայ վանքը. 1863
-ին ձեռնադրուած է վարդապետ և 1873-ին
եպիսկոպոս Տ. Գէորգ Մեծադարձ կաթողի-
կոսէն: Երկար ժամանակ եղաւ վանահայր
Արմաշի վանքին, ուր ինքն հիմնեց նաև «Յոյս»
ամսաթերթը, 1888 սեպտ. 29-ին: Տ. Խո-
րէն Սրբազան ընտրուեցաւ Պօլսոյ պատրի-
արք և այդ պաշտօնը շարունակեց մինչև
1894 յունիս 15: Տ. Խորէն Սրբազան բացի
«Յոյս» էն ունեցած է բազմաթիւ աստուա-
ծարանական թարգմանութիւններ և ինքնա-
գիր յօդուածներ՝ հրատարակուած այլևայլ
թերթերու մէջ՝ «Ասողիկ» և «Ստեփանէ»
կեղծանուններով:

Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ
հինգշաբթի օր՝ Բերայի ս. Երրորդութիւն ե-
կեղեցւոյն մէջ. պատարագեց Ամեն. Ս. պատ-
րիարքը և դամբանականը խօսեցաւ վերաբե-
րումէն վերջ. ներկայ էին մայրաքաղաքին
բոլոր եպիսկոպոսները, աշխարհականներէն
բազմաթիւ ականաւոր անձինք, բողոքականաց
ազգապետը, Ռուսական դեսպանատունէն ներ-
կայացուցիչ մը, նմանապէս հայ-հռոմէական-
ներէն պատուաւոր ազգայիններ և յոյն վա-
ճառականներ:

Ս. Օծումը կատարուեցաւ քարոզէն վերջ.
հանգուցելոյն մարմինը մեծ հանդիսով փոխա-
դրուեցաւ Եիշիի գերեզմանատունը և թա-
ղուեցաւ Տ. Խորէն Նար-Պէյ և Տ. Գ.
Սրուանձտեանց եպիսկոպոսներուն քով:

— Ամեն. Ս. Պատրիարքն հոկտ. 8-ին Կայս.
պալատ գնաց և տեսակցելով Ա. քարտուղար Թա-
սին պէյի հետ, իր շնորհակալութիւնն յայտնեց
վեհ. Սուլթանին քարեհաճ իրաւունքուն համար.
Ա. քարտուղար Պէյը ս. պատրիարքին զգացումնե-
րը մատոյց վեհ. Սուլթանին, որ քարեհաճեցաւ Եր
բարձր զօհունակութիւնն յայտնել և Եր քարենե-
րն հաղորդել ն. Ամենապատուութեան, գնահա-
տելով անոր պաշտօնավարութիւնն և մատուցած
ծառայութիւնները. ն. Ահհապատութիւն հաւաս-
տեց թէ ամէն գիւրութիւն պիտի շնորհուի ն.
Սրբազնութեան Արքային գործերուն բարւոք ուղ-
ղութեան համար:

Ն. Ամենապատուութեան ծանուցուեցաւ Կ.
իրաւէ մը որ կը պատուիրէ Դատական գործոց նա-
խարարութեան որ Վիլնիոյ կաթողիկոսին ըն-
տրական գործողութիւնները փութացնեն և հետեա-
պէս Խառն ժողովն կողմէ պատուիրակ կարգուած
Տ. Սահակ եպս. Խապայեանի պաշտօնն հաստատող
հրամանագիրը տրուի և ճամբայ հանուի կրօն.
Տեսչութեան կողմէ որոշուած Պէհա Պէյ որ Ա-
տանայի կամ Սոյ մէջ կաթողիկոսական ընտրու-
թեան գործողութեանց ներկայ պիտի գտնուի ի
գիմաց կայսեր. կառավարութեան:

Հինցած և խաբիւած եկեղեցիներուն նորո-
գութեանց համար պնակներ չընագայելու մասին
կարգադրութիւն լինելով, Եզգ. պատրիարքարանէն
գրուած է պատկանեալ Առաջնորդարանաց՝ նոյն
վիճակին մէջ գտնուող և պէտք ունեցող եկեղե-
ցիներուն նորոգութեան մասին:

Նոյն օրը Ս. պատրիարքը նաև այցելեց գա-
տական, կրօնական նախարարները, կրօնային գոր-
ծոց վերատեսուչը, Մեծ. Նպարքոսը, ներքին և ար-
տաքին գործոց նախարարները, լայնական խորհրդ-
ոյ նախագահը և ներքին գործոց նախարարութեան
խորհրդականը, Այս երկարատև այցելութիւններէ
ետք պատրիարքարան երթալով ստանձնեց իւր պաշ-
տօնը:

Ս. Պատրիարքը կիրակի օրը յատկապէս քա-
րոզեց Մայր եկեղեցւոյ մէջ Հայ ժողովրդեան ծա-
նուցանելու համար շնորհեալ կայսերական իրաւե-
նները, մեծ բազմութիւն խառնուած էր եկեղեցւոյ
մէջ, հեռաւոր թաղերէն բազմաթիւ ունկնդիրներ
լցուած էին. Ս. Պատրիարքին բնարանն էր Պօլսո
առաքեալի մի գուցէ ընդունայն ինչ ընթացեալ
իցեմ կամ ընթանայցեմ՝ խօսքը, խօսեցաւ շատ
եռանդուն կերպով, ոգևորեալ շնչաւորով և պահ
մը նաև յուզուած, սովորականէն աւելի շարժե-
լով իր ունկնդիրները: Ն. Ամենապատուութիւն
բացատրեց այն բազմազմի դժուարութիւնները
որոնք պահ մը զինքը մեկուսացուցին, բայց նաև
իր հաստատականութիւնը, որով չուզեր գործէ
խուսափել, Ուստի ինքը գիմեց ն. Կ. Ահհապա-